ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼԻԼԻԹ

ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ԼԻԲԱՆԱՆՈՒՄ (1958-1975ԹԹ.)

Պաղեստինցիների առաջին զանգվածային ներհոսքը Լիբանան տեղի ունեցավ 1948թ. պաղեստինա-իսրայելյան առաջին պատերազմից հետո: Արդեն 1975թ., երբ Լիբանանում քաղաքացիական պատերազմ բռնկվեց, պաղեստինցիների թիվը հասնում էր մոտ 450 հազարի: Լիբանանի տարածքում գտնվում էին մոտ 15 պաղեստինյան փախստականների ճամբարներ, որոնցից Սաբրան, Շատիլան, Թել-Զաաթարը գտնվում էին Բեյրութի արվարձաններում, Այն ալ-Հիլուեն՝ հարավլիբանանյան Միդոն (Սայդա) քաղաքի մոտ, Ռաշիդիյան՝ Տիր (Սուր) քաղաքի մոտ, Նահր ալ-Բարիդը՝ Տրիպոլիից 17 կմ հեռավորության վրա և այլն: Այս ճամբարները գտնվում են ՍԱԿ-ի Աջակցության և Հասարակական Աշխատանքների գործակալության վերահսկողության տակ (UNRWA)[1]:

Իրենց հետազոտություններում մեր կողմից ուսումնասիրվող խնդրին անդրադարձել են՝ Ն. Հովհաննիսյանը[2], Ե. Պրիմակովը[3], Ե. Դմիտրիևը[4], Վ. Կիսելյովը[5] Պ. Միլը[6], Ի. Ռաբինովիչը[7], Թ. Փեթրանը[8], Ջ. Դենոյանը[9], Բ. Համիզրաչին[10] և ուրիշներ:

1958թ. Լիբանանում բռնկվեց առաջին քաղաքացիական պատերազմը, որի հիմնական պատճառը երկրի նախագահ Քամիլ Շամունի և Լիբանանի վարչապետ Սամի Սոլհի վարած ոչ ճկուն ներքին և արտաքին քաղաքականությունն էր: Լիբանանի կառավարությունը, հրաժարվելով «Ազգային Դաշինքով» սահմանված չեզոքության քաղաքականությունից, վարում էր բացահայտ արևմտամետ քաղաքականություն: Լիբանանի կառավարությունը նույնիսկ միացավ «Էյզենհաուերի դոկտրինային», որը նախատեսում էր ԱՄՆ-ի կողմից օգնության տրամադրում Մերձավոր Արևելքի արևմտամետ վարչակարգերին[11]: Այս հանգամանքը Լիբանանում առաջացրեց ժողովրդական դժգոհություն, որը վերաճեց ապստամբության:

1958թ. Լիբանանում բռնկված ապստամբության ժամանակ պաղեստինյան փախստականները արդեն որոշակի համակրանք էին ցուցաբե-

ռում Ազգային Ճակատի՝ լիբանանյան դեմոկրատական ուժերի նկատմամբ: Շատ պաղեստինցիներ նույնիսկ մասնակցում էին դեմոկրատական ուժերի պայքարին անհատական սկզբունքով, քանի որ, 1958թ. Լիբանանում պաղեստինյան համայնքը դեռևս քաղաքականապես և ռազմական տեսանկյունից կազմավորված չէր:

1958թ. դեմոկրատական ուժերի պայքարի արդյունքում երկրի նախագահ ընտրվեց լիբանանյան բանակի գլխավոր հրամանատար՝ գեներալ Ֆուադ Շիհաբը: Նոր կառավարությունը անմիջապես հրաժարվեց «Էյզենհաուերի դոկտրինայից» և հայտարարեց, որ Լիբանանը վերադառնում է դրական չեզոքության քաղաքականության[12]: Այս հանգամանքը նպաստեց արաբական երկրների հետ Լիբանանի հարաբերությունների բարելավմանը: Լիբանանյան կառավարության առջև ծառացել էին մի շարք խնդիրներ: Անհրաժեշտ էր վարել ճկուն և խորաթափանց քաղաքականություն, որը ներքին ասպարեզում հնարավորություն կտար հավասարակշռություն պահպանել լիբանանյան քաղաքական տարբեր ուժերի և բոլոր կրոնական համայնքների միջև, իսկ արտաքին ասպարեզում՝ հավասարակշռել նաև հարաբերությունները Արաբական աշխարհի և Արևմուտքի հետ: Դրան զուգահեռ հարկավոր էր իրականացնել որոշակի սոցիալական, տնտեսական և քաղաքական բարեփոխումներ, որոնք կնպաստեին Լիբանանի սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացմանը:

Ֆուադ Շիհաբի վարչակարգը հենց սկզբից հատուկ ուշադրություն էր ցուցաբերում Լիբանանում պաղեստինցիների ներկայության նկատմամբ: Այս կապակցությամբ նոր նախագահը ուժեղացրեց լիբանանյան անվտանգության ուժերը՝ «Երկրորդ գրասենյակը» (Deuxième Bureau), որին հանձնարարվեց Լիբանանում պաղեստինյան փախստականների ճամբարների վերահսկումն ու նրանցում պաղեստինյան զինվորական խմբավորումների հնարավոր կազմավորման կանխումը[13]: Մինչև 1962թ. «Երկրորդ գրասենյակին» հաջողվում էր որոշակիորեն վերահսկել պաղեստինցիների գործողությունները Լիբանանում: Սակայն արդեն Ֆուադ Շիհաբի նախագահության վերջին երկու և ապա Լիբանանի հաջորդ նախագահ Շարլ Հելուի նախագահության տարիներին (1964-1970թթ.), կապված արաբա-իսրայելյան հակամարտության առավել խորացման և սրման հետ, պաղեստինցիները սկսեցին բավական ակտիվություն ցուցաբերել Լիբանանում: Արդեն 1964թ. Լիբանանում հաստատված պաղեստինցիները կազմում էին երկրի բնակչության մոտ 10%-ը: Լիբանանի տարածքում նույնիսկ գործում էին մի քանի պաղեստինյան զինված ջոկատներ, որոնք մտադրություն ունեին Լիբանանի տարածքը՝ մասնավորապես երկրի հարավը, որը սահմանակից էր Իսրայելին, օգտագործել վերջինիս դեմ պայքարում[14]:

Իսրայելին սահմանակից չորս արաբական պետություններից Լիբանանը, Հորդանանից հետո, երկրորդն էր իր տարածքում հաստատված պաղեստինցիների թվաքանակով: Բնական էր, որ 1964թ. նոր ձևավորված Պաղեստինի Ազատագրության կազմակերպությունը (ՊԱԿ-ը) մտադիր էր Իսրայելի դեմ ուղղված իր գործողությունների զգալի մասը իրականացնել հենց Լիբանանի տարածքից: Մինչև 1967թ. ՊԱԿ-ը ղեկավարող Ահմադ աշ-Շուքայրին* բնակվում էր Լիբանանում: Շիական Քայֆուն գյուղի մոտ գտնվող իր ամառանոցը նա դարձրել էր ռազմական բազա, որտեղ զինվորական պատրաստություն էին անցնում պաղեստինյան մարտիկները[15]: «Երկրորդ գրասենյակը», լիբանանյան մահմեդական ղեկավարների հետ լուրջ տարաձայնություններ չառաջացնելու պատճառով, խուսափում էր կտրուկ քայլեր ձեռնարկել և արգելել Քայֆունի շրջակայքում անցկացվող պաղեստինյան մարտիկների զորավարժանքները: Այս փաստը անհանգստացնում էր լիբանանյան քրիստոնյաներին, մասնավորապես մարոնիներին, որոնք դեմ էին պաղեստինյան ցանկացած ակտիվության Լիբանանի տարածքում:

Լիբանանում պաղեստինյան զինված խմբավորումների հետ կապված լուրջ խնդիրներ սկսեցին ի հայտ գալ 1965թ., երբ պաղեստինյան զինված մի ջոկատ, Լիբանանի հարավից, անցնելով Իսրայելի հետ սահմանը, հարձակման ենթարկեց Իսրայելի հյուսիսային մի քանի բնակավայրեր: Այս կապակցությամբ «Երկրորդ գրասենյակը» ավելի ուժեղացրեց իր հսկողությունը պաղեստինցիների նկատմամբ, որի արդյունքում առաջիկա մեկ-երկու տարիների ընթացքում պաղեստինցիների Լիբանանի տարածքից Իսրայելի դեմ ուղղված ռազմական գործողությունները ժամանակավորապես պասիվ բնույթ էին կրում[16]:

Նշենք այն կարևոր հանգամանքը, որ պաղեստինցիների ներկայությունը Լիբանանում չէր սահմանափակվում միայն պաղեստինյան փախստականների և պաղեստինյան զինված խմբավորումների առկայությամբ: Կրթված և նյութական միջոցներով ապահովված պաղեստինցիների մի ստվար խումբ, չնայած լիբանանյան առևտրա-ֆինանսական բուրժուազիայի ոչ բարեհաճ վերաբերմունքին, ստացավ Լիբանանի քաղաքացիություն և հմտորեն ներգրավվեց լիբանանյան առևտրա-ֆինանսական շրջանակներում: Այս պաղեստինցիները հիմնականում հաջողությունների էին հասել առևտրի, սպասարկությունների և բանկային ծառայությունների ոլորտներում, և իրենք իրենց հերթին մեծ ներդրում ունեին Լիբանանի ազգային տնտեսության մեջ:

Լիբանանյան ազգային տնտեսության մեջ պաղեստինյան փոքրաթիվ բուրժուազիան իր ամենախոշոր ներդրումն ու խորհրդանիշը համարվում էր «Ինտրա» բանկը (Ինտերնացիոնալ Առևտրականների Բանկ), որը դրամի փոխանակման մի փոքր գրասենյակից դարձավ Բեյ-

ռութի առաջնակարգ բանկերից մեկը, որը մասնաճյուղեր ուներ մի շարք արաբական երկրներում, արևմտյան Եվրոպայում և ԱՄՆ-ում: Այս բանկի հաջողությունները հիմնականում կապված էր նրա հիմնադիր՝ պաղեստինցի քրիստոնյա Յուսուֆ Բահդասի և նրա օգնական՝ պաղեստինցի մահմեդական Բադր ալ-Ֆահումի համատեղ հաջող աշխատանքի հետ[17]: «Ինտրա» բանկը հանդիսանում էր Լիբանանում պաղեստինյան համայնքի ամենազգալի ձեռքբերումը:

«Ինտրա» բանկի հաջողությունները անհանգստացնում էին լիբանանյան առևտրա-ֆինանսական բուրժուազիայի քրիստոնեական՝ մասնավորապես մարոնի շրջանակներին: 1966թ. հոկտեմբերին հենց այս շրջանակների լավ կազմակերպված դավադրության արդյունքում «Ինտրա» բանկը շատ անսպասելի սնանկացավ[18]: Բանկի ղեկավարության բոլոր ջանքերը կանխելու այս գործընթացը անցան ապարդյուն: Այս հանգամանքը մեկ անգամ ևս ցուցադրում էր այն թշնամական վերաբերմունքը, որ տածում էր մարոնի վերնախավը Լիբանանում պաղեստինյան որևէ ներկայության նկատմամբ:

Լիբանան պաղեստինցիների երկրորդ մեծ ներհոսքը տեղի ունեցավ 1967թ., արաբա-իսրայելյան պատերազմից հետո, երբ 6 օր տևած պատերազմի ընթացքում Իսրայելը գրավեց Սինայ թերակղզին և Ղազայի հատվածը, Հորդանան գետի արևմտյան ափը, Գոլանյան բարձունքները ու արևելյան Երուսաղեմը[19]:

Իսրայելին սահմանակից չորս արաբական պետություններից, որոնք մտնում էին Իսրայելին դիմակայող Միացյալ Արաբական Հրամանատարության կազմի մեջ, միայն Լիբանանն էր, որ չմասնակցեց այդ պատերազմին:

1968թ. սկսած հարավային Լիբանանում գտնվող պաղեստինյան ռազմական բազաներում պատրաստված պաղեստինցի մարտիկները ակտիվորեն իրականացնում էին ռազմական գործողություններ Իսրայելի հյուսիսային բնակավայրերի վրա: Պաղեստինյան զինվորական ջոկատների ներկայությունը Լիբանանում երկյուղ և անհանգստություն էր առաջացնում լիբանանյան աջ ուժերի շրջանում, որի կորիզը կազմում էին Լիբանանայան փաղանգներ կուսակցությունը (Հիզբ ալ-Քաթաիբ ալ-Լուբնանի), որը ղեկավարում էր Պիեր Ժմայելը և Ազգային լիբերալ կուսակցությունը (Հիզբ ալ-կառումի ալ-ահրար), որը ղեկավարում էր Քամիլ Շամունը[20]: Լիբանանայան աջ ուժերը գանում էին, որ պաղեստինյան զինվորական խնբավորումների Իսրայելի դեմ Լիբանանի տարածքից ռազմական գործողությունների հետագա իրականացումը կհանգեցներ այն բանին, որ Լիբանանը նույնպես կներքաշվեր արաբա-իսրայելյան հակամարտության մեջ՝ դրանից բխող բոլոր հետևանքներով:

Պաղեստինյան զինվորական խմբավորումները սերտորեն համագործակցում էին լիբանանյան ազգային-հայրենասիրական ձախ ուժերի հետ, որի մեջ մտնում էին Առաջադիմական սոցիալիստական կուսակցությունը, որը ղեկավարում էր Քամալ Ջունբլատը, Լիբանանի կոմունիստական կուսակցությունը, Կոմունիստական գործունեության կուսակցությունը, լիբանանյան նասերականները (մոտաբիթունները) և այլն:

1968թ. դեկտեմբերին, երբ Աթենքի օդանավակայանում պաղեստինյան մի ահաբեկչական խմբավորման կողմից գրոհի ենթարկվեց իսրայելյան մի օդանավ, Իսրայելի զինվորական հրամանատարությունը, որպես պատասխան քայլ, դեկտեմբերի 29-ին կազմակերպեց օդային հարձակում Բեյրութի միջազգային օդանավակայանի վրա, որի արդյունքում ոչնչացվեցին 13 լիբանանյան ուղևորական ինքնաթիռներ[21]: Այս գրոհով Իսրայելը նպատակ ուներ վախեցնել «պաշտոնական» Լիբանանին, ամրապնդել լիբանանյան քրիստոնյաների՝ մասնավորապես մարոնիների դիրքերը և խորացնել լիբանանցիների հակակրանքը պաղեստինցիների հանդեպ:Սակայն այս գրոհի արդյունքում Լիբանանի իսլամ բնակչության համակրանքը պաղեստինցիների հանդեպ էլ ավելի ամրապնդվեց:

1969թ. ողջ ընթացքում Լիբանանում բազմաթիվ բախումներ տեղի ունեցան լիբանանյան բանակի և պաղեստինյան զինվորական խմբավորումների միջև, որոնք հրահրվում էին լիբանանյան մարոնիների կողմից:

Որոշ պաշտոնական տվյալների համաձայն արդեն 1969թ. Լիբանանում պաղեստինյան զինված մարտիկների թիվը հասնում էր 5 հազարի: Այս մարտիկները ներկայացնում էին «Ֆաթհ»-ը (Հարաքաթ ալ-Թահրիր ալ-Ուատանի ալ-Ֆալաստինի), Սիրիայի կողմից հովանավորվող «աս-Սաիկա»-ն, Պաղեստինի Ազատագրության Ժողովրդական Ճակատը, Պաղեստինի Ազատագրության Արաբական Ճակատը և Պաղեստինի Ազատագրության Դեմոկրատական Ճակատը: Այս զինված խմբավորումները հիմնականում կենտրոնացել էին լիբանանա-իսրայելյան սահմանի մոտ՝ Հերմոն գետին հարակից խիտ բուսականություն ունեցող շրջանում, որը հրաշալի թաքստոց էր և ռազմական բազաներ հիմնելու հարմար վայր: Այս շրջանը բնակեցված էր հիմնականում մահմեդականներով՝ մասնավորապես շիաներով, ինչը հնարավորություն էր տալիս պաղեստինյան զինված մարտիկներին ազատորեն գործել Լիբանանի այս շրջանում[22]:

1969թ. մայիսի 6-ին Լիբանանի նախագահ Շարլ Հելուն հանդես եկավ հեռուստաելույթով, որում նշեց. «Լիբանանը կարող է միայն սատարել Պաղեստինի Ազատագրության կազմակերպության օրինական գործողությունները, բայց միևնույն ժամանակ ստիպված է սահմանափակել

պաղեստինյան զինվորական խմբավորումների գործողությունները Լիբանանում՝ ապահովելով Լիբանանի հանրապետության անկախությունն ու ազգային անվտանգությունը»[23]: Լիբանանի նախագահի այս ելույթը խոսում էր այն մասին, որ նախագահը կանաչ լույս էր վառում լիբանանյան բանակի պաղեստինցիների դեմ իրականացվող գործողությունների ճանապարհին: Նախագահի այս ելույթը, սակայն, արտահայտում էր միայն լիբանանյան քրիստոնյաների՝ հատկապես մարոնիների տեսակետը: Մինչդեռ մի քանի մահմեդական ազդեցիկ ղեկավարներ իրենց դժգոհությունն արտահայտեցին երկրի նախագահի այդ ելույթի կապակցությամբ: Այս պայմաններում ոչ մի սունի ազդեցիկ գործիչ չէր համաձայնում իրականացնել պաղեստինցիների հանդեպ լիբանանյան իշխանությունների որդեգրած այդ քաղաքականությունը: Արդյունքում Լիբանանը ապրում էր քաղաքական լուրջ ճգնաժամ*:

Ստեղծված պայմաններում երկրի նախագահ Ծ. Հելուն համաձայնվեց գնալ որոշակի զիջումների: 1969թ. լիբանանյան բանակի հանձնախումբը գեներալ Բուսթանիի գլխավորությամբ մեկնեց Կահիրե, որտեղ ՊԱԿ-ի ներկայացուցիչների հետ՝ Յասեր Արաֆաթի գլխավորությամբ, նոյեմբերի 3-ին, 7 ժամ տևողությամբ բանակցությունների արդյունքում, ստորագրվեց լիբանանա-պաղեստինյան գաղտնի համաձայնագիր, որով սահմանվեցին պաղեստինցիների իրավունքներն ու գործողությունների բնույթը Լիբանանի տարածքում[24]: Համաձայն մի քանի արաբական և արևմտյան աղբյուրների ստորագրված համաձայնագրով նախատեսվում էր[25].

1. Պաղեստինյան զինված խմբավորումների de jure ներկայություն Լիբանանի տարածքում: Պաղեստինյան ռազմական բազաների առկայություն, սակայն միայն երկրի հարավում;
2. Պաղեստինյան փախստականների ճամբարների de facto անցում լիբանանյան իշխանությունների հսկողություն տակ;
3. Պաղեստինցի երիտասարդներին, որոնք ցանկանում էին իրենց մասնակցությունը բերել Պաղեստինյան Դիմադրության Շարժմանը, թույլատրվում էր առանց լուրջ արգելքների անցնել պաղեստինյան ռազմական բազաների տեղակայման շրջաններ՝ Լիբանանի հարավ;
4. Պաղեստինցիները, իրենց հերթին, պարտավորվում էին հարգել Լիբանանի ազգային անվտանգությունը, անկախությունը, տարածքային ամբողջականությունն ու կայունությունը:

Այս փաստաթուղթը առաջին համաձայնագիրն էր, որ ստորագրվեց որևէ արաբական պետության, տվյալ դեպքում Լիբանանի և Պաղեստինի Ազատագրության կազմակերպության միջև, որում ՊԱԿ-ը, պետական մակարդակում, հանդես էր գալիս որպես բանակցությունների լիիրավ մասնակից և հավասարազոր գործընկեր: Պաղեստինի Դիմադրութ-

յան շարժման (ՊԴՇ) համար Կահիրեի համաձայնագրի նշանակությունը այն էր, որ առաջին անգամ պաշտոնապես արձանագրվեց վերջինիս ներկայության կարգավիճակը արաբական որևէ պետության տարածքում: Հակառակ էական սահմանափակումների, ՊԴՇ-ը Լիբանանում ձեռք բերեց հստակորեն սահմանված իրավունքներ: Այսպիսով, համաարաբական մակարդակում սկսվեց ՊԱԿ-ի որպես ինքնուրույն գործոնի ճանաչման գործընթացը:

Կահիրեի համաձայնագիրը միանշանակորեն չընդունվեց լիբանանյան հասարակության կողմից: Սինչ լիբանանյան ձախ ազգային-հայրենասիրական ուժերը ողջունում էին այս համաձայանագրի ստորագրումը, լիբանանյան բոլոր տեսակի աջերը՝ մասնավորապես մարոնի վերնախավը, թեև առերես ճանաչում էին Կահիրեի համաձայնագիրը, բայց իրականում դեմ էին Լիբանանում պաղեստինցիների ներկայությանը, իսկ ստորագրված համաձայնագիրը համարում էին զիջողական Լիբանանի համար: Լիբանանյան աջ ուժերը գտնում էին, որ Կահիրեի համաձայնագիրը de jure հնարավորություն էր տալիս պաղեստինցիներին օգտագործել Լիբանանի տարածքը Իսրայելի հետ պայքարում և ստեղծել «պետություն պետության մեջ»[26]:

ՊԱԿ-ի ղեկավարությունը իր հերթին բազմիցս հայտարարում էր, որ ՊԱԿ-ը չի խառնվում Լիբանանի ներքին գործերին, հարգում է Լիբանանի անկախությունն ու անվտանգությունը: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ Պաղեստինյան Դիմադրության Շարժումը Կահիրեի համաձայնագրի ստորագրումից հետո ակտիվացրեց Լիբանանի տարածքից Իսրայելի դեմ իրականացվող իր գործողությունները: ՊԱԿ-ը ելնում էր այն դրույթից, որ ողջ արաբական ներուժը՝ քաղաքական և ռազմական պետք է ի սպաս դրվեր Պաղեստինի ազատագրման գործին:

Պաղեստինցիների երրորդ մեծ ներհոսքը Լիբանան տեղի ունեցավ 1970թ. Հորդանանում «սև սեպտեմբերի» արյունալի դեպքերից հետո*, երբ ՊԱԿ-ը՝ Յասեր Արաֆաթի գլխավորությամբ, իր ղեկավար մարմիններով, կազմակերպություններով և պաղեստինյան մեծաքանակ զինվորական խմբավորումներով հաստատվեց Լիբանանում:

Դեռևս 1970թ. մարտին Իսրայելը մի շարք լուրջ օդային հարձակումներ իրականացրեց Լիբանանի հարավում: Իսրայելը զգուշացրեց լիբանանյան կառավարությանը, որ կձեռնարկի ավելի խիստ միջոցառումներ, եթե լիբանանյան կառավարությունը միջոցառումներ չձեռնարկի պաղեստինյան զինվորական խմբավորումները իր տարածքից դուրս բերելու ուղղությամբ[27]: Պաղեստինցիների կողմից Լիբանանի հարավից Իսրայելի դեմ իրականացվող ցանկացած գործողության ի պատասխան, Իսրայելը կատաղի հարձակումներ էր իրականացնում Լիբանանի ողջ տարածքում՝ հատկապես հարավում:

Պաղեստինցիները, իրենց հերթին, մեծ աջակցություն էին ցույց տալիս լիբանանյան ձախ ազգային-հայրենասիրական ուժերի պայքարին, որոնք պահանջում էին Լիբանանում որոշակի սոցիալական, տնտեսական և քաղաքական բարեփոխումների իրականացում, և մահմեդական բնակչության ավելի լայն մասնակցություն երկրի կառավարման գործում: Լիբանանյան ձախերի և պաղեստինցիների միջև հաստատվել էր սերտ փոխհամագործակցություն:

1972թ. սկսած Իսրայելը վարում էր «չհայտարարված պատերազմ» Լիբանանի հարավային շրջանների դեմ: Իսրայելը նպատակադրվել էր, հենվելով լիբանանյան քրիստոնյաների վրա, Լիբանանից դուրս բերել պաղեստինցիներին և ոչնչացնել ՊԱԿ-ն ու նրա ղեկավարությանը: Իսրայելի օժանդակությամբ և աջակցությամբ կազմավորվեց «Լիբանանի հարավի ազատագրման բանակը», որի կորիզը կազմում էին կազմալուծվող լիբանանյան բանակի քրիստոնյա զինվորները և, որը Իսրայելի դրդմամբ հարավում պատերազմում էր պաղեստինյան զինված միավորումների դեմ[28]:

1972թ. սեպտեմբերին, երբ Մյունխենի օլիմպիական խաղերի ժամանակ պաղեստինյան «Մև սեպտեմբեր» խմբավորման կողմից իրականացվեց իսրայելյան ինը մարզիկների և նրանց մարզչի սպանությունը, Լիբանանը ստիպված էր փոխհատուցել ամբողջությամբ: Երկու օր անընդմեջ իսրայելյան օդային ուժերը Միջերկրական ծովի ողջ երկայնքով ռմբակոծեցին Լիբանանի տարածքը՝ պատճառելով մեծ մարդկային կորուստներ և ավերածություններ: Շուրջ 400 մարդ սպանվեց[29]: Մի շարք պայթյուններ տեղի ունեցան Բեյրութի Համրա փողոցում, որտեղ գտնվում էին Ֆաթհ-ի մի քանի ղեկավարների բնակարանները:

1973թ. մայիսին ձախողվեց լիբանանյան բանակի հերթական ևս մեկ փորձ, որի նպատակն էր բախումների ճանապարհով ՊԴԲ-ը դուրս բերել Լիբանանից:

Լիբանանյան բանակի և պաղեստինյան զինվորական խմբավորումների միջև արյունալի բախումները հնարավոր եղավ դադարեցնել 1973թ. մայիսի 18-ին, երբ հաշտության համաձայնագիր կնքվեց լիբանանյան իշխանությունների և Պաղեստինյան Դիմադրության Շարժման միջև: Որոշում ընդունվեց նաև ձևավորել Միացյալ Քարձրագույն հանձնաժողով, որը կազմված էր լինելու լիբանանյան բանակի հրամանատարության ներկայացուցիչներից և Պաղեստինյան Դիմադրության Շարժման հրամանատարության ներկայացուցիչներից: Այս հանձնաժողովի ստեղծման նպատակն էր հարթել լիբանանյան իշխանությունների և պաղեստինյան զինվորական խմբավորումների միջև եղած խնդիրները[30]: Սակայն ինչպես Կահիրեի համաձայնագիրը, այնպես էլ այս

հանձնաժողովի կազմավորումը որևէ կերպ չնպաստեցին երկրում խաղաղության վերջնական հաստատմանը:

1973թ. ապրիլի 10-ին, իսրայելյան հատուկ ծառայությունների կողմից Բեյրութում իրականացվեցին մի շարք ահաբեկչական գործողություններ, այդ թվում նաև Բեյրութի Վերդին փողոցում կազմակերպեցին ՊԴԾ-ի ականավոր գործիչներ Մուհամեդ Նաջարի, Աղուանի և Ջամալ Նասերի սպանությունները[31]:

1970-ականների սկզբին Լիբանանում կտրուկ սրվել էին հակասությունները տարբեր կուսակցությունների և խմբավորումների միջև: Լիբանան առանց որևէ լուրջ արգելքների ներմուծվում էր մեծաքանակ զենք և զինամթերք: Յուրաքանչյուր կուսակցություն, խմբավորում և կազմակերպություն ուներ իր սեփական ոստիկանական ջոկատները: Այս զինված ջոկատների թիվը հասնում էր մոտ 29-ի: 1974թ. հոկտեմբերին Լիբանանը ամբողջ աշխարհում գրավում էր առաջին տեղը՝ բնակչության մեկ շնչին բաժին ընկնող զենքի քանակությամբ[32]:

Այսպիսով, Լիբանանը, որին հաջողվել էր զերծ մնալ մերձավորարևելյան հակամարտությանը ուղղակի մասնակցությունից, 1970-ականներին ամբողջությամբ ներքաշվեց այդ հակամարտության մեջ՝ դրանից բխող բոլոր աղետաբեր հետևանքներով: Դժվար չէ նկատել այն ուղղակի կապը, որ գոյություն ուներ մերձավորարևելյան ճգնաժամի և լիբանանյան հակամարտության միջև: Լիբանանում ստեղծված իրավիճակին սրություն էր հաղորդում նաև այն հանգամանքը, որ տարածաշրջանային և ոչ տարածաշրջանային մի շարք ուժեր, ելնելով իրենց շահերից, ջանում էին ավելի խորացնել լիբանանյան հակամարտությունը: Այս հակամարտության գլխավոր պատճառներից մեկն էլ հանդիսանում էր երկրում պաղեստինյան ռազմական և քաղաքական կառույցների ներկայությունը: Լիբանանը, փաստորեն, Հորդանանից հետո դարձավ երկրորդ արաբական պետությունը, որտեղ պաղեստինցիները, չհանդիսանալով Լիբանանի բաղադրիչը, որոշակի հանգամանքների բերումով, հաստատվելով Լիբանանում, դուրս եկան լիբանանյան իշխանությունների վերահսկողությունից և դարձան ներքաղաքական լուրջ գործոն, ինչն իր հերթին առաջ բերեց լիբանանա-իսրայելյան հարաբերությունների սրում և նպաստեց լիբանանյան հասարակության երկփեղկմանն ու նրանում առկա հակասությունների աննախադեպ խորացմանը, որի արդյունքում 1975թ. Լիբանանում բռնկվեց երկարատև քաղաքացիական պատերազմ:

HARUTUNYAN LILIT

THE PALESTINIAN MILITARY AND POLITICAL STRUCTURES IN LEBANON (1958-1975)

(Summary)

After the Arab-Israeli Wars in 1948 and in 1967, nearly 450.000 Palestinians settled down in Lebanon. There were 15 Palestinian refugee camps in Lebanon, which were on the handout of the United Nations Relief and Work Agency (UNRWA).

In 1970, after "Black September" in Jordan, the Palestinian Liberation Organization (PLO) with it's chief Yasir Arafat, together with the Palestinian National Liberation Movement Command and the Palestinian militery organizations and units, displaced from Jordan to Lebanon.

Lebanon, after Jordan, became the second Arab country, where the Palestinians secceeded in becoming one of the most important inter-political factors.They managed to act out of the Lebanese authorities' control, which promoted the disconnection of the Lebanese society and intensify the existed contradictions within.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Rosemary Sayigh, Najda Newsletter "Palestinians in Lebanon: Waiting", vol. 35, No. 4, Summer, 1995, p. 2.
2. Ն. Հովհաննիսյան, Լիբանանյան ճգնաժամը և Լիբանանի հայ համայքի դիրքորոշումը, Երևան, 1982:
3. Ե. Պրիմակով, Մի դավադրության պատմություն, Երևան, 1987:
4. Е. Дмитриев, Палестинский узвл, М., 1978.
5. В. Киселев, Палестинская проблема в международных отношениях: региональный аспект, М., 1988.
6. P. Seale, Assad. The Struggle for the Middle East, London, 1988.
7. It. Rabinovich, The War for Lebanon 1970-1985, New York, 1985.
8. T. Petran, The Struggle over Lebanon, New York, 1987.
9. G. Denoyan, El-Fath Parle, Les Palestiniens contre Israël, Paris, 1972.
10. B. Hamizrachi, The Emergence of the South Lebanon, Security Belt: Majior Saad Haddad and the ties with Israel, New York, 1988.
11. "СССР и Арабские страны. 1917-1960. Документы и материалы", М., 1961, с. 503.
12. Michael C. Hudson, The Precarious Republic: Political Moderization in Lebanon, New York, 1985, p. 298.
13. Tabitha Petran, The Struggle over Lebanon, New York, 1987, p. 58.
14. «Մասլումաթ», Բիյրուտ, 15.02.1995.
15. Մանրամասն տե՛ս Е. Дмитриев, Палестинская трагедия, М., 1986, с. 71-72.
16. K. S. Salibi, Cross roads to Civil War: Lebanon 1958-1976, New York, 1976, p. 26.
17. Sandra Mackey, Lebanon: Death of a Nation, New York, 1991, p. 136.

18. "Le Monde", 26 Octobre, 1966.
19. The Middle East and North Africa, 1966-1967, London, 1967, p. 397.
20. Г. Никитина, Государство Израиль, М., 1968, с. 380.
21. Н. Оганесян, Ливанский конфликт и Армянская община Ливана, Советский опыт решения национального вопроса и его значение для - народов Африки и Азии, Ереван, 1982, с. 31.
22. "Le Monde", 30 Decembre, 1968.
23. "Washington Post", August, 1969.
24. «ան-Նահար», Բեյրութ, 07.05.1969:
25. Սանրամասն տե՛ս Новейшая история арабских стран Азии, М., 1988, с. 126, Е. Мельников, Политический и государственний строй Ливана, М., 1974, с. 133.
26. "Daily Star", Beirut, 05.11.1969.
27. «ալ-Սիյասար», Բեյրութ, 04.11.1969:
28. "Washington Daily News", 05.11.1969.
29. "Le Monde Diplomatique", Paris, 06.11.1969.
30. ТАСС, 15.11.1969.
31. Սանրամասն տե՛ս Е. Дмитриев, Палестинская трагедия, М., 1986, с. 80, его же, Палестинский узел, М., 1978, с. 77; Н. Оганесян, Отношение Иракской Республики со странами Арабского Востока, Ереван, 1985, с. 74; It. Rabinovich, H. Shaked, From June to Octobre, The Middle East between 1967 and 1973, New Jersey, 1978, p. 239; Ռ. Կարապետյան, Սիրիա-ամերիկյան հարաբերությունները (1967-1996), Երևան, 2000, էջ 47, Պ. Սիլ, ալ-Ասադ. աս-Սիրաա ալա աշ-Շարկ ալ-Առսաա (արաբերեն՝ Ասադ. պայքար Մերձավոր Արևելքի համար), Լոնդոն, 1988, էջ 253-235:
32. Helena Cobban, The Making of Modern Lebanon, London, 1985, p. 103.
33. Ближний Восток и Международное право, М., 1982, с. 83.
34. Sandra Mackey, Lebanon: Death of a Nation, New York, 1991, p. 150.
35. ТАСС, 18.05.1973.
36. А. Агарышев, От Кэмп-Дэвида к трагедии Ливана, М., 1982, с. 3.
37. Н. Горбунова, Ливан накануне гражданской войны (1975-1976), Арабские страны: История, экономика, политика, М., 1986, с. 245.